Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ ԹԻՎ 9-Ա, 10-Ն ԵՎ 12-Ա-15-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 10-Ն որոշումն իր մեջ պարունակում է երկու տարբեր բնույթի իրավական ակտեր, ուստի անհրաժեշտ է երկու առանձին որոշումներով հաստատել ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման և ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2020 թվականի տարեկան հաշվետվությունները հիմք՝ Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մաս:

Որոշման նախաբանում Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերի փոխարեն անհրաժեշտ է հղում կատարել նույն հոդվածի 5-րդ և 8-րդ մասերին:

Բացի այդ, որոշմամբ հաստատված ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը պետական լիազորված մարմնի սահմանած ձևաչափին համապատասխան չի ներկայացվել (հիմք՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մաս):

Թիվ 12-Ա որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել թիվ 9-Ա որոշմամբ հաստատված օրակարգի 3-րդ հարցին:

Թիվ 13-Ա որոշման հավելվածի վերնագրում համարվող բառն անհրաժեշտ է փոխարինել հանդիսացող բառով:

Թիվ 14-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 70-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի, սոցիալական օգնություն տրամադրվում է սոցիալապես անապահով այն ընտանիքներին, որոնք համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտավորություններ չունեն, հետևաբար անհրաժեշտ է նշում կատարել նաև սոցիալական օգնություն ստացած անձանց անապահովության և համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ:

Հավելվածի 7-րդ սյունակում հեկտար բառն անհրաժեշտ է գրառել լրիվությամբ:

Թիվ 15-Ա որոշման նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասին:

Որոշման հավելվածում առկա են կրճատ գրառված բառեր:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
16.03.2021թ.